



Կարգապահական գործ թիվ 19003

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի հունիսի 18-ի թիվ 161-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/103-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԶՈՐՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի
քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,
քննության առնելով փաստաբան Անդրանիկ Զորոյանին (արտոնագիր՝ 240)
(**այսուհետ՝ նաև Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

24.01.2019թ. Պալատում մուտքագրվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Խաչիկյանի (**այսուհետ նաև՝ Դիմող**) կողմից ներկայացված դիմումը, որով, վերջինս հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (նախագահող՝ դատավոր Ա.Խաչիկյան) կողմից քաղաքացիական գործով 29.11.2018թ. կայացված վճռի դեմ փաստաբան Անդրանիկ Զորոյանի կողմից 21.12.2018թ. բերված վերաքննիչ բողոքում անդրադարձ է կատարվել ոչ միայն նյութական և դատավարական իրավունքների խախտումներին, այլ նաև վերաքննիչ բողոքում տեղ են գտել դատավորին հասցեագրված վիրավորական և հեզնական արտահայտություններ, մասնավորապես. «*տգիտության շնորհանդես*», «*դատավոր կոչեցյալ*», «*կտրիճ դատավոր*», «*խեղաթյուրություն դատավորը հաճախակի հիշողության կորուստներ է ունենում*», «*դա ծաղրուծանա՞կ է, թե՞ զավեշտ*», «*սպասված ակնկալիքների չարդարացում*», «*ըստ դատավորի դրանք վերաբերելի և արժանահավատ կլինեին միայն այն դեպքում, եթե ստորագրված լինեին առնվազն վարչապետի կողմից*»:

Դիմողը խնդրել է փաստաբան Պատասխանողի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և ենթարկել կարգապահական պատասխանատվության:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 18.02.2019թ. թիվ 40-Ա/ԿԳ-19003 որոշմամբ փաստաբան Անդրանիկ Զորոյանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 2.2.3 ենթակետի և 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

05.03.2019 թվականին կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Գևորգ Մարտիրոսյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Դիմողը 18.03.2019թ. բացատրությամբ, վերահաստատելով իր դիմումում նշված պնդումները, միաժամանակ նշել է, որ ԿԴ/1840/02/18 գործով իր վերաքննիչ բողոքում Պատասխանողը ևս վիրավորական և զրպարտչական արտահայտություններ է կատարել Դիմողի հասցեին՝ անելով հետևյալ արտահայտությունները «Ա. Խաչիկյանի հերթական արարչագործությունն է», «դատավորը բացահայտ կեղծիքի է դիմել», «դատավորը տառաճանաչ չէ», «դատավորը հանգում է հանճարեղ հեղուկության», «դատավորի մոտ մոլուցք է կամ հորբի է խեղաթյուրել փաստերը, իրեն ձեռնպուտ տեսանկյունից գնահատել ներկայացված ապացույցները, չտարբերակել և անտեսել լիազորումը, վերալիազորումը»: Ըստ Դիմողի՝ Պատասխանողը նման վարքագիծ է դրսևորել նաև ԿԴ/0741/02/18 գործով վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքում՝ կատարելով հետևյալ արտահայտությունները՝ «դատարանի հանրաճանաչ հեղուկություն», «ըստ դատարանի մարմնավաճառ», «տեղին է հիշել մեծն Զիվանու հայտնի երգի դարձվածքը՝ խելքին աշեցեք», «միակ գնահատականը՝ այսպես կոչված դատավորը բարոյական բոլոր չափանիշներից զուրկ անձ է»:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

24.05.2019թ. Պալատում մուտքագրվել է Պատասխանողի բացատրությունը, որում Պատասխանողն ընդունել է, որ Դիմողի հասցեին կատարել է Դիմողի կողմից իրեն վերագրվող արտահայտությունները և նշել է, որ դրանք համապատասխանում են իրականությանը:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործը նախապատրաստող անձը 19.04.2019թ. կազմել է

եզրակացություն:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 22.04.2019թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 18.06.2019 թվականին՝ ժամը 18:30-ին՝ ՀՀ փաստաբանների Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակում:

Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ նաև՝ **Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը՝ հաստատված է համարում հետևյալ փաստը.

- Դիմողի 29.11.2018թ. կայացված վճռի դեմ Պատասխանողի կողմից 21.12.2018թ. բերված վերաքննիչ բողոքում Պատասխանողը Դիմողի հասցեին կատարել է հետևյալ արտահայտությունները. «տգիտության շնորհանդես», «դատավոր կոչեցյալ», «կտրիճ դատավոր», «խեղաթյուրություն դատավորը հաճախակի հիշողության կորուստներ է ունենում», «դա ծաղրուծանա՞կ է, թե՞ զավեշտ», «սպասված ակնկալիքների չարդարացում», «ըստ դատավորի դրանք վերաբերելի և արժանահավատ կլինեին միայն այն դեպքում, եթե ստորագրված լինեին առնվազն վարչապետի կողմից»:

Սույն փաստը հաստատվում է գործում առկա փաստաթղթերով, այդ թվում՝ Դիմողի դիմումով, Դիմողի և Պատասխանողի բացատրություններով:

5. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Անդրանիկ Զորոյանը փաստաբան է հանդիսանում 03.07.1991թ., և 2015-2019թթ. նրա նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել՝ չհաշված սույն կարգապահական վարույթը:

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Անդրանիկ Զորոյանը թույլ է տվել Կանոնագրքի 2.2.3 ենթակետի և 4.1 կետի խախտում՝ հետևյալ պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային փորձունալի առջև, պետք է

ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Խորհուրդը հիշեցնում է, որ փաստաբանը, ունենալով առանձնահատուկ հասարակական կարգավիճակ, ունի իրավական և բարոյական պարտականությունների լայն շրջանակ: Փաստաբանը՝ որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձ, իրավունք ունի և պարտավոր է բարեխղճորեն պաշտպանել իր վստահորդների իրավունքներն ու օրինական շահերը՝ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով: Հետևաբար, փաստաբանի պարտականությունների հասցեատերերը ոչ միայն վստահորդներն են, այլև արդարադատության գործառույթ իրականացնող մարմինները՝ դատարանները: Սույն դատողությունն արտացոլված է նաև Կանոնագրքի դրույթներում: Մասնավորապես, **Կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արդյունություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:**

Հաշվի առնելով փաստաբանի գործառույթների և դրանցից բխող պարտականությունների բազմազան բնույթը՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնագրքով հստակորեն սահմանված են փաստաբանի այն հիմնական պարտականությունները, որոնք նա ունի ինչպես վստահորդի, այնպես էլ՝ դատարանի հետ հարաբերություններում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Կանոնագրքի 4.1 կետին, որը նախատեսում է դատարանի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին ենթարկվելու, այդ թվում՝ դատավորին հարգանքով վերաբերվելու պարտականություն:

Փաստաբանի վարքագիծը, որը խախտում է Կանոնագրքի նշված կանոնը, կասկածի տակ է դնում սեփական պարտականությունների նկատմամբ փաստաբանի ընդհանուր բարեխղճությունը, քանի որ փաստաբանի պարտականությունները չեն սահմանափակվում միայն իր վստահորդի հանձնարարության կատարմամբ, այլ ընդգրկում են տարաբնույթ այլ պարտականություններ, այդ թվում՝ դատարանի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին ենթարկվելու, դատարանի նկատմամբ հարգանք դրսևորելու, դատավորին հարգանքով վերաբերվելու պարտականություն:

Ավելին՝ Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ մեկնաբանությունների «դ» կետի համաձայն՝ *փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակագրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության*

նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կարարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի փվյալ մասնագիտությունը:

Սույն դրույթը վկայում է այն մասին, որ կշեռքի մի նժարին դրված է փաստաբանի արտահայտվելու ազատությունը, իսկ մյուս նժարի վրա՝ փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի, որին Սահմանադրությամբ վերապահվել է պետության կողմից երաշխավորված անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումը, հեղինակությունը, մի կառույցի հեղինակությունը, որին անդամագրված են արդարադատության իրականացման գործընթացում հասարակության և դատարանի միջև միջնորդ հանդիսացող փաստաբանները, կառույց, որի բարձր հեղինակությունից է նաև կախված յուրաքանչյուր փաստաբանի հեղինակությունը պետական մարմինների, դատարանների և այլ անձանց հետ հարաբերվելիս: Այս տեսանկյունից, բնականաբար, արդարացված և հավասարակշռված է փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը, որն ուղղված է մյուս բոլոր փաստաբանների և առհասարակ փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Նման սահմանափակումն անհրաժեշտ է հասարակության (այդ թվում՝ փաստաբանական համայնքի) համար:

Կանոնագրքի 4.1 կետի վերոգրյալ դրույթի վերլուծությամբ փաստվում է, որ այն ներառում է դատավորի նկատմամբ հարգալից վերաբերմունքի դրսևորման փաստաբանի պարտականությունը:

Դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունքը հանդիսանում է դատավարության բոլոր կողմերի, այդ թվում պաշտպանների հիմնարար պարտականություններից մեկը: Ընդ որում, փաստաբաններն այս հարցում ունեն առանձնահատուկ հանձնառություն, քանի որ կոչված են նպաստել արդարադատության իրականացմանը և հանդիսանում են միջնորդ հասարակության և դատական իշխանության միջև:

Դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունքը չի նշանակում փաստաբանի կողմից իր վստահորդների շահերը պաշտպանելիս դատարանի հետ շփումներում կաշկանդվածություն կամ դատարանի համակրանքը շահելու գործողությունների իրականացում՝ ի վնաս իր վստահորդի շահերի: Կանոնագրքի 4.1 կետի երկրորդ նախադասությամբ փաստվում է, որ դատարանում գործող վարվելակերպի կանոններին ենթարկվելու փաստաբանի պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը:

Փաստաբանը դատարանի հանդեպ հարգանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Միևնույն ժամանակ վստահորդի շահերի պաշտպանությունը չի կարող իրականացվել Կանոնագրքին հակասող կամ Կանոնագրքի դրույթները խախտող

եղանակներով և միջոցներով, **Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:**

Պալատի խորհուրդը գտնում է, որ դատարանի և դատավորի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելու պարտականությունը նախատեսված է Կանոնագրքով, ուստի՝ չի կարող իրավաչափ համարվել դատարանի կամ դատավորի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելը՝ նույնիսկ վստահորդի շահերի պաշտպանության նպատակադրմամբ: Նմանապես, վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալը չի կարող պատրվակ հանդիսանալ դատարանի հետ հարաբերություններում ոչ իրավաչափ վերաբերմունք ցույց տալու համար:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Պալատի խորհուրդը հարկ է համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե արդյոք դատավորի անձի նկատմամբ ցուցաբերվող առերևույթ անհարգալից վերաբերմունքը վերագրելի է դատարանին:

ՀՀ Սահմանադրության, ՀՀ դատական օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանի գործառույթները դատարանի անունից իրականացնում են դատավորները, ովքեր ի պաշտոնե ներկայացնում են Հայաստանի Հանրապետությունը:

Օրինակ՝ **ՀՀ Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:**

Միևնույն ժամանակ ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի շարադրանքից հետևում է, որ դատարանի՝ արդարադատություն իրականացնելու սահմանադրական գործառույթն իրականացնում են դատավորները. *արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:*

ՀՀ դատական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ *դատարաններն արդարադատությունն իրականացնում են Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերին և օրենքներին համապատասխան:*

Նույն օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *արդարադատություն և օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս դատավորն անկախ է:*

Վերոնշյալը հաշվի առնելով՝ Խորհուրդը գտնում է, որ դատավորի կողմից իր պաշտոնեական լիազորություններն իրացնելիս և դրանց կապակցությամբ նրան գրավոր կամ բանավոր կամ որևէ այլ կերպ հասցեագրված անիրավաչափ կամ անհարգալից վերաբերմունքը վերագրվում է նաև դատարանին:

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը*

Կանոնագրքի նշված իրավադրույթի խախտման փաստը պարզելու համար Խորհուրդն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին՝

- արդյո՞ք Կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում.

- արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները.

- արդյո՞ք փաստաբանի կողմից կարծիքի հրապարակային արտահայտումը գտնվում է միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կարգավորումների շրջանակներում.

արդյո՞ք Պատասխանողն իր գործունեությամբ չի նպաստել մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

7.1.1. Արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում:

Խորհուրդը գտնում է, որ Կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը, և այդ սահմանափակումը պետք է դիտարկել որպես օրենքով նախատեսված սահմանափակում՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Տվյալ դեպքում նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ, թե արդյոք Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված փաստաբանի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները դիտվում են <<**օրենքով նախատեսված սահմանափակման**>> համատեքստում, թե՛ ոչ:

KINCSES v. HUNGARY գործով 27.01.2015թ. որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ **դիմողի արտահայտվելու ազատությանը միջամտությունը հիմնված է 1998 թվականի թիվ 11 ակտի՝ 37ա և 38 հոդվածների վրա, հետևաբար՝ նախատեսված է եղել օրենքով¹:**

Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենքի (թիվ 11 ակտի) 37ա հոդվածի համաձայն՝ *փաստաբանի կողմից կարգապահական խախտումը համարվում է կատարված, եթե նա խախտել է փաստաբանի էթիկայի նորմերով նախատեսված պարտավորությունները:*

Նշված օրենքի 38-րդ հոդվածը խոսում է Հունգարիայի փաստաբանների պալատի կողմից կիրառվող կարգապահական տույժերի տեսակների մասին:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հունգարիայի փաստաբանը փաստաբանական պալատի կողմից կարգապահական պատասխանատվության էր ենթարկվել Փաստաբանների էթիկայի կանոնների 12.1 և 15.2 կետերի խախտման համար,

¹ Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենք:
2 St'v KINCSES v. HUNGARY 27.01.2015 (no. 66232/10, § 27)

ապա միանշանակ կարելի է փաստել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ փաստաբանի արտահայտվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ դրույթները, որոնք սահմանված են փաստաբանների էթիկայի նորմերով, Կոնվենցիայի տեսանկյունից հավասարեցվում են օրենքով նախատեսված սահմանափակումներին:

Նույն կերպ պետք է ընկալել Պալատի կողմից հաստատված փաստաբանի վարքագծի կանոնադրքով նախատեսված սահմանափակումները, քանի որ Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնադրքի պահանջները խախտելու համար.....*:

7.1.2. Արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները, սույն կարգապահական գործով:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պարվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Այդպիսի կարգավորում ունի նաև Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը, **համաձայն որի՝ այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պարժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, փարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մեկնաբանելով համացանցում արտահայտվելու ազատության պաշտպանության շրջանակների հարցը, նշել է, որ անձի արժանապատվության նկատմամբ ոտնձգությունը կարող է արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանության շրջանակից դուրս լինել, եթե դա անիմաստ վիրավորանք է, օրինակ՝ երբ վիրավորական հայտարարության միակ նպատակը անձին վիրավորելն է:³

Կարևոր է պարզել, թե Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո

³ CASE OF MAGYAR TARTALOMSZOLGÁLTATÓK EGYESÜLETE AND INDEX.HU ZRT-ն ընդդեմ Հունգարիայի, թիվ 22947/13, 02/02/2016, § 76:

արդյոք փաստաբանի վարքագծի սահմանափակումը եղել է իրավաչափ, թե՛ ոչ:

ա) Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 27-րդ հոդվածի և 39-րդ հոդվածի համաձայն, հաշվի առնելով KINCSES v. HUNGARY գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 27.01.2015թ. որոշմամբ⁴ բերված իրավական դիրքորոշումները, Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումներն ամբողջությամբ տեղավորվում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված <<**որոնք նախատեսված են օրենքով**>> հասկացության մեջ:

Եվրոպական դատարանի նշված գործով փաստական հանգամանքները նույնական են, այնքանով, որքանով՝ KINCSES v. HUNGARY գործով դիմողը փաստաբան է և վերջինիս պատասխանատվության է ենթարկել փաստաբանական պալատն արտահայտվելու համար՝ փաստաբանի էթիկայի կանոնների խախտման հիմքով: Հունգարիայի փաստաբանության օրենսդրությունը էթիկայի կանոնների մասով նույնպես վկայակոչող (բլանկետային) է և հղում է կատարում արդեն փաստաբանական պալատի սահմանած էթիկայի կանոններին:

բ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյոք Պալատը, փաստաբանի արտահայտվելու ազատությունը Կանոնագրքով սահմանափակելով, իրավաչափ նպատակ է հետապնդել պաշտպանելու այլ անձանց հեղինակությունը, թե՛ ոչ: Նշվածը պարզելու համար նախ պետք է մեջբերել Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերը, այն է՝ Փաստաբանների պալատի խնդիրներն են՝ 4) *վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման նկատմամբ.* 5) *միջոցներ ձեռնարկել փաստաբանության հեղինակության բարձրացման ուղղությամբ:* Փաստաբանության հասկացությունը տրված է նույն օրենքի 3-րդ հոդվածում, որի համաձայն՝ *Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:*

Նշված իրավական նորմերի վերլուծությունից միանշանակ պարզ է դառնում, որ Պալատի խնդիրներից է բարձր պահել ՀՀ բոլոր փաստաբանների միավորման արդյունքում ձևավորված կառույցի հեղինակությունը, և հետևաբար, Պալատի մարմին հանդիսացող Պալատի խորհրդի կողմից այն փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելը, որը խախտել է Կանոնագրքի համապատասխան պահանջը՝ դրանով իսկ բացասաբար ազդելով բոլոր փաստաբանների հավաքական միավորում հանդիսացող փաստաբանության հեղինակության վրա:

գ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյոք ժողովրդավարական հասարակության համար նման միջամտությունն անհրաժեշտ էր և հետևաբար, արդյո՞ք պահպանվել էր այն հավասարակշռությունը մի կողմից փաստաբանության հեղինակության պաշտպանության, և մյուս կողմից անձի արտահայտվելու ազատության սահմանափակման միջև: Այս հարցին անդրադառնալու համար նախ և առաջ անհրաժեշտ է խոսել հասարակությունում փաստաբանության դերի

⁴ Տես՝ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մաս

և նշանակության մասին:

Այսպես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համաձայն՝ փաստաբաններն իրենց հատուկ կարգավիճակով պայմանավորված՝ որպես միջնորդ, կենտրոնական դիրք են զբաղեցնում հանրության և դատարանների միջև արդարադատության իրականացման գործընթացում: Նման կարգավիճակով է բացատրվում նրանց վարքագծի նկատմամբ սովորաբար կիրառվող սահմանափակումները որպես փաստաբանական միության անդամ⁵:

Կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Կանոնագրքի 1.2 ենթակետի համաձայն՝ մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պարզաճ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև **Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի⁶ կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի» դրույթները:**

Պալատի կանոնադրության 2.2 կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ փաստաբանների պալատը հետապնդում է նաև հետևյալ նպատակները և խնդիրները՝ **նպաստել** Հայաստանի Հանրապետության լիակատար ինտեգրմանը եվրոպական կառույցներում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցմանը եվրոպական չափանիշներին, **Եվրոպական իրավական ստանդարտների և ավանդույթների արմատավորմանը:**

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (այսուհետ՝ նաև CCBE) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների <<դ>> կետի համաձայն՝ փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ

⁵ St' u Casado Coca v. Spain գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, 24.02.1994թ. վճիռը (§ 54):

առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել Կոմիտեի մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկի Կոմիտեի մասնագիտությունը⁷:

«Սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ դատարանը նշել է՝ Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ «Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ «Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. «Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները **սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը**»:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ կշեռքի մի նժարի վրա դրված է փաստաբանի արտահայտվելու ազատությունը, իսկ մյուս նժարի վրա՝ փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի, որին Սահմանադրությամբ վերապահվել է պետության կողմից երաշխավորված անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումը, հեղինակությունը, մի կառույցի հեղինակությունը, որին անդամագրված են արդարադատության իրականացման գործընթացում հասարակության և դատարանի միջև միջնորդ հանդիսացող փաստաբանները, կառույց, որի բարձր հեղինակությունից է նաև կախված յուրաքանչյուր փաստաբանի հեղինակությունը պետական մարմինների, դատարանների և այլ անձանց հետ հարաբերելիս:

Այս տեսանկյունից, բնականաբար, արդարացված և հավասարակշռված է փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը, որն ուղղված է մյուս բոլոր փաստաբանների և առհասարակ փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Նման սահմանափակումն անհրաժեշտ է հասարակության համար:

7.1.3 Արդյո՞ք փաստաբանի կողմից կարծիքի հրապարակային արտահայտումը գտնվում է միայն «քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կարգավորումների շրջանակներում»:

«Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք

⁷ Տե՛ս CCBE A Commentary on the Charter of Core Principles of the European Legal Profession

ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

Քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար.....:

Վերը հիշատակված նորմերից հետևում է, որ Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի և Կանոնագրքի կարգավորման առարկան տարբերվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով կարգավորվող առարկայից:

Օրենսգրքի 1087.1 հոդվածը պաշտպանում է անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, իսկ Կանոնագիրքը պաշտպանում է փաստաբանության՝ որպես մասնագիտական միավորման հեղինակությունը, անկախությունը և օրինապահությունը:

Կանոնագրքի պահանջի խախտման համար փաստաբանի՝ պատասխանատվություն կրելը չի լուծում կարգապահական վարույթով դիմողի մասնավոր շահի պաշտպանության հարցը: Օրինակ՝ եթե փաստաբանը պայմանագրով նախատեսված հոնորարի այն մասը, որի համար ծառայություն չի մատուցել, պայմանագիրը լուծելուց հետո չի վերադարձնում վստահորդին, ապա նա խախտում է Կանոնագրքի պահանջը, սակայն փաստաբանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու արդյունքում նրա վստահորդի մոտ չի ավելանում փաստաբանի կողմից վճարման ենթակա գումարը: Ի վերջո, գումարի վերադարձման համար վստահորդը պետք է դիմի դատարան:

Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ կարող է քննարկել՝ Պատասխանողի արարքը հակասում է Կանոնագրքի պահանջներին, թե՛ ոչ:

7.1.4 արդյո՞ք Պատասխանողն իր գործունեությամբ չի նպաստել մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Կանոնագրքի 2.2.3 ենթակետով փաստաբանի վրա դրվում է համակողմանի պարտականություն իր գործունեության բոլոր բնագավառներում նպաստել

փաստաբանության մասնագիտական բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու արտահայտմանը: Սույն պարտականությունն ունի ինչպես պոզիտիվ, այնպես էլ նեգատիվ դրսևորում: Առաջին դեպքում ենթադրվում է փաստաբանի կողմից որոշակի ակտիվ գործողությունների կատարում սեփական մասնագիտական և անձնական վարկանիշի բարձրացման ուղղությամբ՝ այդպիսով իր նպաստը բերելով փաստաբանի մասնագիտության հանրային վարկանիշի բարձրացմանը: Նեգատիվ պարտականությունը փաստաբանի պատշաճ վարքագծի նվազագույն շեմն է, երբ փաստաբանից պահանջվում է առնվազն չկատարել հանրորեն պարսավելի, անպարկեշտ, հակաօրինական և փաստաբանի մասնագիտության հանրային վարկը խաթարող գործողություն կամ անգործություն:

Փաստաբանի վարքի նկատմամբ հարաբերականորեն խիստ սահմանափակումները պայմանավորված են փաստաբանի մասնագիտության առանձնահատուկ բնույթով և հանրային բարձր կարգավիճակով, որը պայմանավորված է փաստաբանության՝ որպես իրավապաշտպան գործունեության մեծ կարևորությամբ: Փաստաբանը հանդիսանում է հասարակության հատուկ սուբյեկտ, ով ստանձնել է իր առանձնահատուկ դերը՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի շնորհիվ և որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող սուբյեկտ նպաստում է արդարադատության իրականացմանը: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն վստահորդների հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության ընկալման համար:

Սույնի համատեքստում փաստաբանի վրա են դրվում են բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, և նրա նկատմամբ գործում են առանձնահատուկ պահանջներ՝ կապված անձնական վարքագծի հետ. լինի դա մասնագիտական գործունեության, թե այլ ոլորտներում: Ուստի՝ **փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ**, այլ ընդգրկում են նրա մասնագիտական-իրավական և բարոյական օրինակելիության բարձր չափանիշներ միջանձնային և հասարակական ամենատարբեր շփումների և առնչությունների ժամանակ: Փաստաբանի՝ որպես անհատի գործունեությունը հասարակության կողմից ասոցացվում է փաստաբանի ինստիտուտի հետ, ընդհանրապես, ուստի և՛ փաստաբանն իր առօրյա գործունեության իրականացման ընթացքում պետք է դրևսորի այնպիսի վարքագիծ, որը կնպաստի փաստաբանի կոչման և առաքելության նկատմամբ հարգանքի և վստահության բարձրացմանը, ինչը փաստաբանի բարոյական պարտավորությունն է: Փաստաբանի օրինակելի վարքագծի կարևորագույն դրսևորումներից է իր գործընկերների և այլ անձանց անձի, արժանապատվության և համբավի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելը, միջանձնային քաղաքավարի վարվեցողությունը:

Տվյալ պարագայում Խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ Պատասխանողը Դիմողի՝ որպես դատարանի վճռի դեմ ներկայացված իր վերաքննիչ բողոքում Դիմողի հասցեին կատարել է հետևյալ արտահայտությունները՝ «*պոզիտիվության շնորհանդես*», «*դատավոր կոչեցյալ*», «*կտրիճ դատավոր*», «*խեղաթյուրություն դատավորը*

հաճախակի հիշողության կորուստներ է ունենում», «դա ծաղրուծանա՞կ է, թե՞ զավեշտ», «սպասված ակնկալիքների չարդարացում», «ըստ դատարանի դրանք վերաբերելի և արժանահավատ կլինեին միայն այն դեպքում, եթե ստորագրված լինեին առնվազն վարչապետի կողմից»: Պալատի խորհուրդն արձանագրում է, որ նշված արտահայտությունների կատարման փաստը Պատասխանողն ընդունել է 24.05.2019թ. Պալատում մուտքագրված բացատրության մեջ՝ նշելով նաև, որ իր արտահայտությունները համապատասխանում են իրականությանը:

Պալատի խորհուրդը գտնում է, որ Դիմողի կայացրած վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքում Դիմողի հասցեին Պատասխանողի կատարած արտահայտությունները կրում են Դիմողի՝ որպես դատարանի գործառույթներ իրականացնող անձի նկատմամբ անհարգալից բնույթ, քանի որ իրենցից ներկայացնում են ոչ թե Դիմողի՝ որպես դատարանի գործողությունների և կայացրած վճռի վիճարկում և քննադատություն, այլ Դիմողի մասնագիտական ունակությունների և անձնական հատկանիշների վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականներ, որոնք նման արտահայտություններ հասցեատեր անձի մոտ ողջամտորեն կարող է առաջացնել վիրավորվածության հոգեբանական զգացում: Նման արտահայտությունները, որոնք կատարվում են փաստաբանի կողմից դատարանի հասցեին, իրենցից ներկայացնում են դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք և չեն նպաստում փաստաբանի մասնագիտության նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը: Փաստաբանը դատարանի հետ հարաբերություններում պարտավոր է ձեռնպահ մնալ թե՛ բանավոր և թե՛ գրավոր ձևով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի ցանկացած դրսևորումից: Դատարանի նկատմամբ փաստաբանի անհարգալից վերաբերմունքը կասկածի տակ է դնում փաստաբանի մասնագիտական հեղինակությունն ու հանրային դրական ընկալումը և, առհասարակ, խաթարում է արդարադատության իրականացումն ողջ գործընթացի հեղինակությունն ու վստահելիությունը:

7.2. Խորհրդի կողմից կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցը.

Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի համաձայն՝ Պալատի խորհուրդը՝ լուծում է փաստաբանին պատասխանատվության ենթարկելու և կարգապահական տույժ նշանակելու հարցը:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Պալատի խորհուրդը, հաշվի առնելով Անդրանիկ Զորոյանի անձը, կարգապահական խախտման հետևանքները, մեղքի աստիճանը, տույժերի բացակայությունը, գտնում է, որ վերջինիս նկատմամբ պետք է կիրառել «նկատողություն» տույժի տեսակը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով էսորիուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Անդրանիկ Ջորոյանին (արտոնագիր 240) ճանաչել մեղավոր Կանոնագրի 2.2.3 ենթակետի և 4.1 կետի խախտման համար:

2. Փաստաբան Անդրանիկ Ջորոյանի (արտոնագիր 240) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

**ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝**

Հարություն Հարությունյան

**18 հունիսի 2019թ.
թիվ ԿԳ/103-Ա
ք. Երևան**